Մնանկ ճանաչված Արաքսի Հրաչի Իգիթյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կրկնաճուրդ

2026-10-19 14:14:32

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

ՀՀ սնանկության դատարանի 16.06.2026թ. թիվ ՍնԴ/1395/04/25 որոշման համաձայն՝ 12.10.2026թ. ժամը 12:30-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նստավայրում /ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5, 1-ին հարկ, 109 սենյակ/ Արաքսի Հրաչի Իգիթյանի սնանկության գործով հայտարարված աճուրդը տեղի չունեցավ գնորդ չլինելու պատճառով։
Նկատի ունենալով վերոգրյալը՝05.11.2026թ. ժամը 12:30-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նստավայրում /ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5, 1-ին հարկ, 109 սենյակ/ տեղի կունենա սնանկ ճանաչված Արաքսի Հրաչի Իգիթյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Կենտրոն Հրազդանի կիրճ 6 հասցեում գտնվող շինության աճուրդ-վաճառքը հրապարակային սակարկությամբ, բաց դասական եղանակով՝ 1 (մեկ) առանձին լոտով։
Լոտ 1- ք. Երևան, Կենտրոն Հրազդանի կիրճ 6 հասցեում գտնվող շինություն /վկայական՝ 19092014-01-0189/, մեկնարկային գինը՝ 29 760 696 ՀՀ դրամ։
Գույքի համառոտ նկարագիրը.
Անշարժ գույքը գտնվում է ք. Երևան, Կենտրոն Հրազդանի կիրճ 6 հասցեում, որը առանձին կանգնած մեկ հարկանի քարե շինություն է, հարևանությամբ այլ շինություններ չկան։ Անշարժ գույքի հողամասի և շինության նպատակային նշանակությունը՝ հասարակական։ Անշարժ գույքի հողամասը կրում է 01-006-0601-0052 կադաստրային ծածկագիրը, մակերեսը ըստ վկայականի 77,26 քմ է։ Հողամասը ըստ վկայականի ծանրաբեռնված է մեկ շինությամբ, որի մակերեսը կազմում է 62,8 քմ /վկայական ՝ 19092014-01-0189/ ։ Շինության տանիքը միալանջ է, պատված ջրամեկուսիչ նյութով,մուտքի դուռը և պատուհանները՝ փայտից են, գտնվում են վատ վիճակում, առկա են ջարդված և վնասված հատվածներ։Շինության ներքին հարդարումը գտնվում է վատ վիճակում, շինությունը երկար ժամանակ չի շահագործվել։
Գնորդը կատարելու է գույքի ձևակերպման, գրանցման հետ կապված բոլոր ծախսերը։
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման

օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ 29.10.2026թ. ժամը 18:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սևանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:
Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ նաև իրենց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև հայտում պետք է նշվի էլեկտրոնային փոստի հասցե: Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տոկոսի չափով (բայց ոչ ավել, քան 300.000 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝ 5 /հինգ/ տոկոսի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապան Արաքսի Հրաչի Իգիթյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 16069051960018 սևանկության հատուկ հաշվին, որպես ստացող նշելով պարտապանին: Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ: Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, որը լոտի վաճառքի գինը պարտավոր է վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից: Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 օրվա ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ: Լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցերով կարող եք զանգահարել սևանկության գործով կառավարիչ՝ Ռ. Եղյանին հեռ. (055) 99-31-99:

37455993199

R.H.Yeghyan@gmail.com

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ Պ., 5 շենք, 408 սենյակ